

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի, Մարտ 31ի ժամը 4ին, Մի սթանուիթեան քսան անդամները Միտրանական յատուկ ժողովի հրաւիրուեցան Պատրիարքարանի ժողովարարհը, ընտրելու համար նոր Լուսարարապետը եւ Տնօրէն ժողովի նոր կազմ մը:

Ժողովը բացուեցաւ Նորին Ամենապատուութեան աղօթքով, որմէ ետք ան Ատենապետութեան հրաւիրեց Միաբանութեան տարէց անդամը՝ Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պողոսեանը. Առողջական պատճառով, Տ. Նորայր Սրբազան հրաժարեցաւ Ատենապետութեան պաշտօնէն եւ ժողովը բացուեցաւ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեանի Ատենապետութեամբ եւ Հոգշ. Տ. Արփիար Արեղայի Ատենադպրութեամբ: Անմիջապէս ձեռնարկուեցաւ Դիւանի ընտրութեան, որը կազմուեցաւ հետեւեալ կերպով.

Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան՝ Ատենապետ,

Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Դարիպեան՝ փոխ-Ատենապետ,

Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան՝ Ատենադպիր, եւ

Հոգշ. Տ. Արփիար Արդ. Տէմիրճեան փոխ-Ատենադպիր:

Նորընտիր Դիւանը ձեռնարկեց նոր Լուսարարապետի ընտրութեան եւ զադտնի քուէարկութեամբ ընտրուեցաւ Գերշ. Տ. Գարեգին Սրբեպս. Գազանճեան, 13 քուէի մեծամասնութեամբ: Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան ստացաւ 6 քուէներ, իսկ մէկ քուէն ճերմակ էր.

Շնորհաւորելէ ետք նորընտիր Լուսարարապետը, ժողովը անցաւ երկրորդ օրակարգին եւ ընտրեց Տնօրէն ժողովը հետեւեալ կազմով.

Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան,

Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զըջանեան,

Հոգշ. Տ. Վաղարշ Վրդ. Խալատուրեան,

Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Դարիպեան,

Հոգշ. Տ. Թուրէն Վրդ. Յովակիմեան եւ

Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան:

Նորընտիր ժողովը ծնրագիր ընդունեց Պատրիարք Սրբազանի օրհնութիւնը, որմէ ետք Նորին Ամենապատուութիւնը յայտնեց Միաբանութեան թէ կը նշանակէ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոսը Պատրիարքական Փոխանորդ:

Ըստ Երուսաղէմի աւանդութեան, հիւնցին Ս. Յակոբեանց Տաճարի զանգերը եւ Միաբանութիւնը առաջնորդեց Պատրիարք Սրբազանը ղէպի Տաճարին Ս. Յակոբայ Գլխադիր Առաքելոյն Մատուոր, ուր դրուեցան Գանձատան բանալիները: Նորընտիր Լուսարարապետը ստացաւ բանալիները Նորին Ամենապատուութեան ձեռքէն, բացաւ Ս. Սարգիսի մատուռին դուռը եւ մտաւ ներս, ուր ընդունեց Միաբան Հայերնու պաշտօնական շնորհաւորութիւնը:

2 Ապրիլ 1981 — Երուսաղէմ:

ԴԻԻԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ:

Կը խնդրեմ ընդունիլ նաեւ ցուակցութիւնները տեղւոյս ազգ. ներկայացուցչական ժամանին, ազգ. Կեդր. Վարչութեան եւ Պրազիւանայ գաղութին:

Մատչելով ի համարող Սրբազանութեանդ Աջոյն

Որդիական խոր պէնտօնութեամբ

ՏԱԹԵԻ Մ. ՎՐԴ. ՂԱՐԻՊԵԱՆ

Միտրան Ս. ԱԹՈՌՈՅ Ե

Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Պրազիւանայ